Ահա ինչու այդ ոճը չի կարելի նմանողութեան ենթարկել՝ դա կը լինի կեղծ եւ միշտ էլ անհարազատ, այլ կարելի է միմիայն վերապրել, այսինքն՝ գերազոյն ճիգով հասնել այն սկիզբնասկիզբ աչխարհազգացողութեան, որով իրականացել է հայ ոգին:

Հին դարերի մէջ այդպիսի բարդ եւ պարզ միութեան միայն հելլենացիները կարողացել են հասնել:

Քրիստոնէական շրջանում, վսեմ համադրութեան հիմնաքարը պատկանում է հայ ժողովուրդին: Ի զուր չէ եւ օտար գիտնականներին ճիգերը այդ հաստատելու, սակայն, մեր հոգու գիրքը մենք միայն կարող ենք կարդալ: Եւ այն օրը, երբ մեր թաղուած այդին նորից երկարի իր ճիւղերը դէպի լոյսը, երբ ցեխերի մէջ ընկած լուսաւոր զգեստը ծածկէ մեր մարմինները, երբ գիտակցութեան առջեւ նորից ներկայանայ մեր իսկական էութիւնը, այն օրը, մենք կարող ենք բովանդակ մարդկութեան յանձնել մեր պատմութեան բանալին եւ տապալուող մշակոյթների եւ քաղաքակրթութիւնների այս շրջանում գտնել հիմնաքարը համադրական նոր մի ոճի:

Ձկա՛յ մեզ համար ուրիշ ելք:

Դարերից ի վեր մենք կեանքի մօտից ենք անցնում: Կիսաքանդ մեր եկեղեցիների շուրջը մատաղ ենք բերում եւ մատաղ ենք դառնում: Հայ ոգին հեռաւոր յիշատակ է, մի տեսակ սրբութիւն, որի հետ մենք խօսում ենք հեռուից, տարին մի քանի անգամ վերակոչում ենք մեքենաբար, տօնի առիթ ենք համարում եւ նորից մտնում ենք մեր ամենօրեայ լինելութեան խանութը՝ փոքրիկ զգացումներ, փոքրիկ գաղափարներ, Ռուսաստանից եւ Եւրոպայից եկած ժան ապրանքներ ծախելու համար:

Մենք պէտք է վերադտնենք խորհուրդների այն հաւասարակշռութիւնը, արժէքների այն հիմնաքարերը, որ ճակատագրականօրէն մերն է:

Հայ վաչխառուների եւ հայ վարժապետների, հայ իմաստակների եւ մտքի սպեկիւլանտների դէմ պէտք է կանգնի նոր հոգեկան ազնուականութեան կորիճ եւ առաքելական գիտակցութիւնը: Հայ կեանքը, որ արաղօրէն վազում է դէպի մահ, պէտք է կառուցանի իր նոր Հռիփսիմէն, մեսիականութեան եւ հոգեկան կայսերականութեան այն հոսանքը, որին բովանդակ մարդկութիւնը ծարաւի է:

Զմոռանանք, որ ինքը Յիսուս, ծնուեց հզօր հռոմէական կայսրութեան ժամանակ, աղքատ մի երկրի ամենայետամնաց եւ թշուառ գաւառում: Ու նաեւ այն, որ մեր առաքեալները, որ գնում էին դէպի արեւմուտք, նոյն Իտալիոյ մէջ, իրենց հետ թագաւորական վեհութիւն էին տանում (S. Miniato, Rex Ermenia):

Ուժ, աներկիւղութիւն, իմաստութիւն, ազնուականութիւն:

Լեո, արեւ եւ անհուն: Ապոլոնեան, Դիոնիսեան եւ Ֆաուստեան մարդու նոր համադրութիւնը պիտի անհրաժեշտօրէն իրականանայ այստեղ, արեւմուտքի եւ արեւելքի ճակատագրական այդ կենտրոնում: Պիտի ծնուի Արարատեան մարդը:

* * *

Գիտեմ՝ այդ մասին ոչ մի բրոշիւրի մէջ գրուած չէ եւ «վերացական սանկ բաները փող չեն անում»: Եւ սակայն, ո՞վ է իմանում, թաղուած այդին գալիք գարնան կարելի է կը շարժի եւ արմատների մէջ հիւթեր կ՝եռան...

Ո՞վ է իմանում...

* * *

Երկու օր է Էջմիածնումն եմ:

Ամէն ինչ փոխուել է:

Մայր տաճարի մէջ այլանդակ, մեծ մի դաշնամուր են դրել, «որպէսզի սովէտներից փրկեն»:

Վարդապետների ձեռքից խուցերի մեծ մասը առել են: Թափթփած մարդիկ՝ ռուսական չապիկ, բարձր կօշիկ՝ հաւեր են պահում, կեղտոտ ջուրերը դուրս ածում եւ եկեղեցիի վրայ թշնամական նայուածքներ ձգում:

Կղերականները գրեթէ չեն երեւում: Ստուերների տակ պատսպարուած մէկ մէկի երեսն են նայում եւ լռում: Կէսօրին, ժողովում են սեղանատուն եւ աղքատիկ սեղանի առջեւ խաչ հանում:

Վեհարանը սինեմայի են վերածել: Զաուլի Զէպլինը գնացել է Էջմիածին եւ 50 կոպէկով նոր կրօնք է ծախում: Երբեմն ներկայանում է Կարլ Մարքսը, կաթողիկոսական երկար միրուքով, եւ Թալմուդից մի էջ է կարդում:

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան